Է-լմ. 579
1. Մէկը տեսա խաչին գամված՝
Նեղյալ, արյունլվա,
Ինձ նայեցավ աչքով տրտմած,
Խաչին երբ մոտեցա:

2. Անշուշտ, բնավ ես չեմ մոռնար,
Ինչ նայվածքով կըսեր.
«Իմ մահս է քեզի համար»,
Թեպետ Ինք չէր խոսեր:

3. Ո՜հ, զգացի տրտմությունով
Մեղքերս ու շատ լացի,
Տեսա, որ ես, մեղանչելով,
Իմ Տերս մեռցուցի:

4. Վա՜յ ինձ, ավա՜ղ, ալ հույս չունիմ,
Լալով ես կանչեցի,
Ո՞ր կողմ երթամ, որո՞ւ փախչիմ,
Զի Տերն սպանեցի:

5. Երկրորդ անգամ գթած աչքով
Խաչեն ինձ նայեցավ
Եվ, Իր շնորհքը հայտնելով,
Սիրով ինծի ըսավ.

6. «Զրի շնորհքով ես կքավեմ
Մեղքերդ, սիրելի՛ս,
Հոժար կամքով մահ հանձն կառնեմ,
Որ հավիտյան ապրիս»: